



ՊԱՐԹԵՒԻ ԿԱՐԵԱՆ ԵՐԳԵՑ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ



Աշակերտները հետ խմբակարար (Լուսանկարը՝ սանուցէմ)

Փարսիկի Արամեան սանուց միութեան երգիչները տակ շարժավերջին երաժշտական ոգևոր ձեռնարկ մը կազմակերպուեցաւ քաղաքի Ասիական ասֆի համայնքային երեք վարժարաններու աշակերտներուն համար: Այսպէս, Համակերպի մենեթերը Պարթեւ Կարեան եւ «Առագաստ» նուագախումբը երաժշտական յայտագիր մը գործադրեցին Արամեան-Ունճեան վարժարանի, Սուրբ Խնայ դպրեմանի եւ Գալֆահան Տան աշակերտներուն համար: Ձեռնարկը

ՍՈՒՐԲ ԶԱՏԿԻ ԱՌԹԻԻ ԽԱՆՂԱՎԱՌՔԻՄԷՆ



Քերմէսի կազմակերպիչ տիկինները (Լուսանկարը՝ դպրոցէմ)

Պոմոնթի Միլիթարեան վարժարանի ծնողաց միութեանը շարժավերջին Ս. Տատիկ առթիւ կազմակերպեց երկօրեայ քերմէս մը, որ արժանացաւ այցելուներու անմիջական հետաքրքրութեան: Ձեռնարկը ճաշակարար իրեցանքները այս անգամ վաճառքի հանուցանեցին ի նպաստ դպրոցին: Այս առթիւ վարժարանի հիմնադրի ներկայացուցիչ ու անօրէն Գարեգին Պարսեան շնորհակալութիւն յայտնեց ծնողաց միութեան, որ իրականացուց այս ձեռնարկը: Քերմէսը կազմակերպեց ծնողաց միութեան մաս կազմին հետեւեալները: Յաստիկ Յակոբեան (ատենապետուհի), Ոսկեան Շէքերճեան, Ալին Կիւլպէնկեան, Թիլոս Զանըր, Մանուշակ Ուլիստոյու, Լէյլա Ունուչ, Էլպուր Սաղաթոյու, Օտէթ Ճանտան, Իրմա Տիշի եւ Հիլուս Միքէլեան:

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ 1-Արմատիք մը- վերջը, 2-Յարաբերական դերանուն մը- մաղէ անցը- նէին, 3-Չայնանի մը- արտոտ- աղանիներուն հանած ձայնը հանէ, 4- Մարգարէ մը- խոհանոցի սպասներէն, 5-Տառի մը անունը- հի մեծ մայրիկ, 6-Յուգոսլան դերանուն մը- բայակերտ մասնիկ մը, 7-Զինուորական աստիճան մը, 8- Յուգոսլան անունը մը- Հակոբակ ուղղութեամբ, 9-Բարձուն կամ գեղուղէ- գրաբար՝ ասոր, 10-Լեզուով մը այր- Հիւսիսային Ատլանտեան Ուխտը- կական բայէն, 11-Անէճը- օտար իգական անուն մը:

ՈՒՂԱՆՆԵՆՆԵՆ 1-Արմատիք մը- հոտը, 2-Չաստուած մը- տառի մը անունը- օտար իգական անուն մը, 3-Իրիզանդական ջրբուժական աղօթատեղի, 4-Անարդարեանի, 5-Արմատիք մը- ստացական անունը- անձնական դերանուն մը, 6-Օրովու ջրուրի համը- Իսթանպուլի պատմական թաղամասերէն, 7-Չայնանի մը- տարիք- չամբղջացած պատ- կէս թաղու, 8-Հի թուրք արական անուն մը- ձայնանիշ մը, 9-Նպաստաւոր չեղող, 10-Լուսաւորութեան միջոց մը- թիւ մը, 11-Լաւ- օգտակար: ՆԱԽԿԻՆԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ Հարիզոնական 1-Հիմնական հիմ, 2-Ամիս- Շամ- մատ, 3-Նա- իմ- մատուկ, 4-Այ- Մարի, 5-Հի առած- ել- Նիշ, 6-(ն)կա- եղիշ, 7-Յա- մառ- արագ, 8-Հի Լիմոզին- լա, 9-Կատարեցին, 10-Իր- լար- տի, 11-Լիրիք- բաշ: Ուղղակայեց 1-Հանածոյ- գիր, 2-Իմասական, 3-Մի- ոսմիկ, 4-Ասիականագատի, 5-(ծ)եռուտ, 6-Ուշ- չեղ- Մարի, 7-Համ- լի- Իրաք, 8-Իմամ- շարիք, 9-Մանիք, 10-Ամուրի- Ալիտա, 11-Ակիշ- գանիշ:

ԺԵՒԹԻ ԴԱՐԵՐՈՒՆ ԲԻՒԶԱԴԻՈՒՆԻ ՀԱՅՆԵՐԸ

ՄԱՇՏՈՑ ԲԱՀԱՆԱՅ ԳԱՎՈՒՔՅԱՆ

Քիւզնդական կայսրութեան գոյութեան ժամանակներէն, Հայերը՝ նկատի չառնելով յունաց կրօնական հարածանքները, անընդ- չատ դադրեցին իրենց Պոլիս եւ այնտեղ բնակութիւն հաստատած են, եւ նոյն իսկ իշխանութեան ու կայսրութեան հասած:

Ե-Ձ դարերուն Հայերը թիւր Պոլիսի մէջ մտաւորապէս 3000 էր բայց անշուշտ մեծ մասամբ «հոռոմացած»: Այս կը նշանակէ, թէ արդէն Ե դարէն Հայեր կ'ապրէին Պոլիս: Յունաց կրօնական հարածանքներու բռնութեան շրջանին՝ ԺԲ եւ ԺԳ դարերուն՝ Բիւզանդիոնի Հայ համայնքը մեծ չէր կրնար ըլլալ եւ առանձին եպիսկոպոսութիւն ունենալ: Բայց վերջերք՝ ԺԴ դարուն, երբ բիւզանդական կայսրերը հետզհետէ տկարացան, Հայ գաղթականութիւնը մասնաւոր կ'իյնկիւնացներ, բազմացաւ: Ուստի այդ գաղթականները Հաստատուեցան Ղալաթիա 1300-ական թուականներուն, ձեռնդական գաղութին մաս:

Այս գաղթականները համար 1391 թուականին, Թէոդորոս Բ Կաթողիկոսի ժամանակ (Թէոդորոս Բ Կիլիկեցի, 1382-1392) Կոստանտնուպոլիսի հայ վաճառական մը Սուրբ Գրիգոր Լուսաւորչի եկեղեցին շինեց, որ մինչեւ այսօր եւս կանգուն է, անշուշտ նորոգութիւններու ենթարկուած:

Հաւանորէն այս գաղթականութեան առաջին եպիսկոպոսն էր Յովնիս, որ 1307 թուականին Սահ ժողովին ներկայ գտնուեցաւ, եւ որը կը կոչուի եպիսկոպոս «Ստիպոլայ»: Սահ ժողովը Հայ եւ միւս քրիստոնէական եկեղեցիներու միութեան իրողութիւնը ընդունեց: Այս թուականէն յետոյ Պոլսոյ մէջ Հայ եպիսկոպոսներ միասնական (1433 թուականին) կը յիշուին Յովհաննէս եւ Եսայի արքեպիսկոպոսներ, որոնց Եւզենոս Գ պապը կ'առաջարկէ Փրորենտիայի ժողովին մասնակցել, իսկ անոնք՝ յայտնելով Հայ եկեղեցիի դաւանութիւնը, կը խոստանան այդ մասին իրենց կաթողիկոսին ծանուցանել:

Միաժամանակ նոյն քաղաքին մէջ երկու եպիսկոպոսներու ներկայութիւնը այս մա-

սին, այս միայն կարող է հաստատել, թէ Հայ գաղութը Պոլիսի մէջ բաւական մեծ էր եւ անշուշտ երկու կամ աւելի թաղերու մէջ, այնպէս որ վերջինս 1433 թուականէն յետոյ, երբ 1453 թուականին Սուլթան Մէհմէդ Բ Պոլիսը առաւ, այնտեղ արդէն կար բաւական մեծ Հայ գաղութ, մասնաւոր Ղալաթիայի մէջ: Պոլիսի առումէն ութ տարի վերջ՝ 1461 թուականին Սուլթան Մէհմէդ Բ, Հայ գաղթականներու հետ Պոլիս կանչեց իր երբեմնի ծանօթ Յովակիմ Եպիսկոպոսը, որ Կուստինայի եւ Բրուսայի (Կուստինա-Քէօթաֆա, Բրուսա=Պրուսա, Պուրսա) Հայոց առաջնորդն էր եւ անոր առանձին Ֆէրմար- նով «բաթրիկ», այսինքն՝ պատրիարք կարգեց. (Յովակիմ Ա Պրուսացի, 1461-1478): Եւ ահա այս ժամանակէն սկսաւ Թուրքիոյ Հայոց պատրիարքութիւնը, որ անընդհատ մինչեւ ցայժմ կը շարունակէ:

Հայոց պատրիարքութեան իրաւաստութեան սահմանները սկզբնապէս ընդարձակ էր: այդ իրաւաստութիւնը սահմանափակուած էր փոքր Ասիոյ մի քանի մերձաւոր մասերով: բայց հետզհետէ Օսմանեան Տէրութեան ընդարձակուելով՝ բարձրացան նաեւ «մայրաքաղաքի Հայ եպիսկոպոս» ղրբը: Այսպէս եւ ան դարձաւ միւս «թեմերու առաջնորդներու ներկայացուցիչ» ու անոնց Հաստատութեան հրովարտակը ստացողը:

Ուստի կախում ունենալով կրօնական խնդիրներու մէջ Հայոց ընդհանուր Հայրապետութեանը՝ Պոլսոյ պատրիարքները Օսմանեան Տէրութեան առջև պատասխանատու էին Հայ Հայատակներու բոլոր գործողութիւններուն համար. ուստի եւ կարեւոր դերակր ընդունեցին անոնց հիմնական հարցերը: Կրօնական-ներքին գործերու մէջ թէեւ Հայրապետութեան կապուած, բայց քաղաքական-արտաքին տեսակէտէ Օսմանեան Տէրութեան պատասխանատու էին ամէն տեսակէտէ:

Պոլսոյ պատրիարքութեան սկզբնապէս ներթափանցած էին քսան առաջնորդութիւններ:

ա) Հոթերնէ, Բ) Թէքերտաղ, Գ) Կեսարիա, Դ) Ամասիա, Ե) Բրուսա (Պուրսա), Զ) Սեբաստիա, Է) Ակի, Ը) Շապին-Կարա Հիսար, Թ) Թոմարգա, Ժ) Տրապիզոն, ԺԱ) Երզնկա (Երզնկեան), ԺԲ) Ուրֆա, ԺԳ) Արմաշ (Երմիշէ):

Այս 13 առաջնորդութիւնները կապ ունէին անմիջաբար Պոլսոյ Հայ պատրիարքութեան հետ:

Յաջորդ թեմերը՝ թէեւ առաջնորդական իշխանութեան հետ, այդ կերպով դարձեալ Պոլսոյ հետ կապուած էին, բայց այնտեղ կը գործէին եւ Մայր Աթոռի նուիրականները. այսպէս էին. ԺԲ) Էնկիւրի (Գաղատիա), (Գաղատիա=Էնքարթ=Անգարա), ԺԳ) Թոքատ, ԺԴ) Տրապիզիթ, ԺԵ) Երզրում, ԺԶ) Կարս, ԺԷ) Ախալցխա, եւ Ի) Ուսուկէի: Իսկ Վան, Մուշ, Բայազիտ, Զմիւռնիա (=Իզմիր), Բաղրատ եւ այլն Տէրութեան, այսինքն՝ Մայր Աթոռին ենթարկուող վիճակներ էին:

Այսպէս էին Պոլսոյ եւ Էջմիածնի կաթողիկոսութեան իրաւաստութեան սահմանները մինչեւ ԺԸ դարու վերջերք, երբ նոր փոփոխութիւններ առաջ եկան: Պատրիարքները կ'ընտրուէին Պոլսոյ ու շրջակայ գաւառներու եկեղեցական ու աշխարհական գլխաւորներու ժողովով: Անոնք Բարձր Դռնէն «խիլայ» (խիլայ=խալաթ, գգեստ՝ որով իշխանութիւն ունեցողներ կը պարզեւատրէին մէկը՝ ի նշան գոնուցանութեան երկար ու լայն կապայ, խալաթ սալ՝ ճուղ տալ) կ'ընտրուէին եւ փոխարէնը տուրք մը կու տային: Ընդհանրապէս թէ՛ ընտրութիւնը, թէ՛ ընտրուողներու անձնաւորութիւնը մեծամեծ խոսովութիւններու եւ խանաչփոթութիւններու պատճառ կ'ըլլային: Արմուկներու մեծ պատճառ մասամբ այ ամիրայական կամ հարուստ դասակարգն էր, որ այս կամ այն փաշայի ազդեցութեան վրայ յենուած՝ ազգային գործերու մէջ ազդեցիկ դեր խաղալ կը ձգտէին...:

Մարտ 16, 2016, Իսթանպուլ

«Հալէպ. վերելքը եւ անկումը Սուրիոյ վաճառականական մեծ քաղաքին»

ՀԱԼԵՊ. ԱՆՅԵԱԼ... ԵՐԱԶ... ՄՂԱԻԱՆԶ...

Սուրիական տագնապի առաջին իսկ օրերէն շրջանային եւ միջազգային լուսարձակները շեղուած կերպով կ'ընդունացան Հալէպի (նահանգ եւ քաղաք) վրայ, եւ այդպէս ալ մնացին: Մեկնարաններ, լրագրողներ, պատմաբաններ, նոյնիսկ բանաստեղծներ հրապարակեցին յօդուածներ, գիրքեր, տարբեր- նոյթ գիտանկիւններով քաղաքական, առեւտրական, մարդասիրական, կրօնական, հնագիտական, յուշագրական եւ այլն: Բոլորին հասարակաց գիրք ցան էր: Յառաջիկայ ամիս Բրիտանիոյ մէջ պիտի հրատարակուի գրող, պատմաբան Տըթ. Ֆիլիպ Մանսելի «Հալէպ. վերելքը եւ անկումը Սուրիոյ վաճառականական մեծ քաղաքին» գիրքը, որուն գրախօսականը «Սիէր-թէյլը» թերթի 5 Մարտի թիւին

մէջ բրած է ձապին Մարոզգի, որ ի դէպ, երբեմն տուրք տուած է սուրիական տագնապին վերաբերեալ արեւմտամտ դիրքորոշումին:

«Հալէպ. գիշերուան մը մէջ հանդուրժողականութենէ դէպի ահաբեկչութիւն» վերնագիրով յօդուածէն թարգմանաբար կը ներկայացնենք շահեկան հատուածներ:

Երբ գերմանացի բժիշկ եւ բուսաբան Էլնոարտ Ռոփոլֆ այցելուած է սուրիական Հալէպ քաղաք, ան անմիջապէս տպաւորուած է քաղաքի բարգաւաճող առեւտրով: «Շատ հիանալի է: Ծանրաբեռնուած ձիերու եւ ուղտերու կարուաններ ամէն օր կու գան աշխարհի բոլոր երկրներէն», գրած է ան 1573-ին, սակայն այս նկարագրութիւնը կըր- նար գրուած ըլլալ որեւէ ատեն, նախորդ քանի մը հազար տարուան ընթացքին:

Հալէպի համար առեւտուրը եւ աշխարհաքաղաքացիութիւնը միշտ եղած են նոյն մետաղադր- բանին երկու երեսները: Անոնք քաղաքի նկարագրին մէջ են իսլամներու կողմէ Հալէպի 637 թուականի գրաւումէն շատ առաջ: Գրեթէ հազար տարի ետք Ռոփոլֆ հաղորդած է Հալէպի մէջ պատահած պատմութիւն մը՝ Օսմանեան կայսրութեան գարգացած սուլթան Սուլէյման Աքանչեիլի մասին: «Սուլթանը կը քննարկէր հրեաներ իրենց անտանելի վաշխատութեան պատճառով վտարելու մասին իր խորհուրդի առաջարկը: Սուլէյ-



Ջալիմ. Հիմնական դարպասը հոգր միջնաբերդին, որ դիմացած է բոլոր դարերու ներխուժումներուն: Այժմ բազմաթիւ սպիներով՝ ան կը դիտուի նրբալոծուած Բաղաբը, ներսնալ՝ Բանդուած միջնաբերդի շուկան, որ մինչեւ վերջերս աշխարհի ամենախոշոր եւ առաւել կենսունակ պատմական փակ շուկան էր եւ կը գտնուէր ԻԻՆՆՍՔՕ-ի համաշխարհային ժառանգութեան ցանկին մէջ

մալեզու Համայնքը միասին կը բարգաւաճէր աշխարհի հնամաշիկներ պարունակող դամբիւղ մը, եւ կը թիւարէ նկատել, որ արդեօք գունազոյ գաղիկները մէկը միւսէն աւելի լաւ չեն: Նուրբ անարիւղ մը ետք, Սուլէյման իր նախապատուութիւնը կատարելապէս կը պարզէ: «Ըստ իս, յարմար է, որ այդ բոլորը, որոնք երկար ատենէ միասին պահպանուած են մինչեւ հիմա, կարելի է նոյն ձեւով պահել եւ հանդուրժել ապագային համար»: Եւ այդպէս եղաւ:

Այսպէսով, օսմանեան պաշտպանութեամբ, բազմալոծ, բազ-

ՏԻԼԻՓ ՄԱՍԵԼ

Պատմաբան Տըթ. Ֆիլիպ Մանսել (ծն. Լոնտոն, 1951) հեղինակ է 11 պատմական գիրքերու (6 դիրք թարգմանուած ֆրանսերէնի) եւ բազմաթիւ յօդուածներու, որոնք գլխաւորաբար կ'առնչուեն Յիւստոնի միասնային, Օսմանեան կայսրութեան եւ Միջին Արեւելքի: Անոր գործերն են «Սուլթանները չեղութեան մէջ» (հրատ. 1988), «Գ. Պոլիս. աշխարհի ցանկութեան քաղաքը 1453-1924» (հրատ. 1995), «Լեւանդ. չեղութիւն եւ աղէտ Միջերկրականի վրայ» (հրատ. 2010):

JAMANAK ERMENICE GÜNLÜK SİYASİ GAZETE Sahibi: SARKIS KOÇUNYAN Yazı İşleri Müdürü: NADİA KOÇUNYAN Basım ve Yayım: JAMANAK DUATEPE MAH. ŞAHADET SOK. NO: 36/4 VARTAN APT. 34379 FERİKÖY-ŞİŞLİ/İSTANBUL (POSTA KUTUSU 22 BEYOĞLU) BU GAZETE BASIN AHLAK YASASINA UYMAYI KABUL ETMİŞTİR YAYIN TÜRÜ YEREL ŞÜRELDİR

JAMANAK ԺԱՄԱՆԱԿ ԲԱՀԱՆԱՅ ԳԱՎՈՒՔՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՐԱԹԵՐՈՒ

108-ԴՊ ՏԱՐԻ (22.03.2016) ՀԻՄՆՈՒՄ 1908-ԻՆ ՄԻՍԱՔ ԵՒ ՍԱՐԳԻՍ ԳՕՁՈՒՆԵՆՆ ԵՂԱՅՐԵՐՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ 0.212.243 56 39 0.212.243 31 96 jamanak@jamanak.com www.jamanak.com



# Ս. ԶԱՏԿԻ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ



«Շիրիմոլու» սրահին մէջ խումբ մը աշակերտներ (Լուսանկարներ՝ Մկրտիչ Արծիւեան)



Տղաք եւ տիկնանց յանձնախումբի անդամուհիները կը սարքեն խմորեղէններ



Խմորեղէնները տեղադրուած փուռի փախէնքու մէջ



Տ. Թաթուլ Մ. Վրդ. Անուշեան հակիթ մերկող աշակերտներու հետ

Ֆերիգիւղի Մէրամէթեան վարժարանի ծնողացի միութիւնը երէկ կազմակերպեց հետաքրքրական ձեռնարկ մը, որ մեծ ոգևորութիւն ստեղծեց զպրոցի աշակերտներու մօտ: Այսպէս, թաղի «Նազար Շիրիմոլու» սրահին մէջ Ս. Զատիկի սօսին ընդունալ, ծնողացի միութեան անդամուհիները առիթ ընձեռեցին, որպէսզի տղաքը պատրաստեն սօսին բնորոշ ուսեստեղէններ՝ չօրէքներ, խմորեղէններ եւ հակիթներ: Ժանկէ Արծիւեանի կողմէ գլխավորուած ծնողացի միութիւնը նախապէս կազմակերպչական բազմակողմանի աշխատանք մը տարած էր նոյնիսկ յատուկ դպրոցներ պատրաստելով աշակերտներուն համար: Առաջին փուլին նախակրթարանի փոքրիկները, իսկ

աւելի վերջ միջնակարգի տղաքը այս հանձնի ծրագրին մասնակցեցան իրենց հայրենի ուսուցիչներուն հակողութեան ներքեւ: Անոնք մէկ կողմէ խմոր բանալով պատրաստեցին չօրէքներ եւ խմորեղէններ, իսկ միւս կողմէ ներկեցին գատուան հակիթներ: Ծնողացի միութեան անդամուհիներն ալ հակեցին անոնց տարած աշխատանքը: Սրան փութալով աշակերտներուն անակնկալ մը մատուցեց նաեւ Տ. Թաթուլ Մ. Վրդ. Անուշեան, որ փոխանցեց իր օրհնութիւններն ու գնահատանքը: Աշակերտներու պատրաստութիւններէն վերջ ծնողացի միութեան անդամուհիները փուռի մէջ եփեցին տղոց պատրաստած չօրէքներն ու խմորեղէնները, մինչ արդէն հասած էր համեստի պահը:

# «ԿՈՐԱՏԵԱԼ ԹՈՉՈՒՆՆԵՐ»ՈՒ ՄԱՍԻՆ ԱՍՈՒԼԻՄ՝ ԳԱՏԸԳԻՒՂԻ ՄԷՋ



Խմբակար մը միութեան սրահին մէջ (Լուսանկարը՝ սանուցեմ)

Յառաջիկայ Ապրիլի 1-ին Թուրքիոյ մէջ առաջին անգամ պիտի ցուցադրուի «Կորստեալ թռչուններ» անուն ժապաւէնը, որուն հետաքրքրութեամբ կը սպասէ շարժանկարի աշխարհը: Հայկական հարցին վերաբերեալ ստեղծագործութիւն մըն է այս մէկը, որու համահեղինակներն են Առէն Փերտէճի եւ Էլա Ալեմալը: Առաջին ցուցադրութեան նախօրեակին, վերջերս Գառգիւղի Արամեան սանուց միութեան մէջ տու-

լիս մը կազմակերպուեցաւ Առէն Փերտէճի եւ Էլա Ալեմալի հետ: Միութեան վարչախումբին Սեւան Աթաթուրք վարեց այս ասուլիսը, որու ընթացքին Փերտէճի եւ Ալեմալի անմիջական միջնորդութիւնը մը մէջ գրուեցին գեղարուեստասէրներու հետ: Ձեռնարկի աւարտին միութեան վարչութեան կողմէ սարքուեցաւ նաեւ ընդունելութիւն մը, որու ընթացքին եւս շարունակուեցաւ ջերմ զրոյցը:

## ՀԱԼԵՊ. ԱՆՏԵԱԼ... ԵՐԱԶ... ՄՂԱԲԱՆԶ...

● **Չար. Բ. Էջէն**  
 քի: Երբ ծնն էլտրէտ (հետագային Լեւանդ ընկերութեան գանձապետը եւ Հայէպի մէջ առեւտուր ընող առաջին անգլիացիներէն մէկը), երբ 1586-ին Հայէպ հասաւ, անոր ուշադրութիւնը գրաւեց աղմուկն ու իրարանցումը՝ ստեղծուած հրեաներու, թաթարներու, պարսիկներու, հայերու, եգիպտացիներու, հնդիկներու եւ բազմաթիւ քրիստոնեաներու կողմէ, որոնք բուրն ալ կը վայելէին «թոզի ագատութիւնը» այն ժամանակ, երբ առիւթ էր լսուած եւրոպայի մէջ: Հայէպի հին ստոյթ մը կ'ըսէր. «Չարագանցութիւնը անսանկի է, նոյնիսկ կրօնական պաշտամունքի մէջ»: Ասիկա այսօր որքան այժմէական կը հնչէ:

Ժացքին համարձակօրէն չէր տպաւորուած օսմանն արիւթապետութեամբ: Հրաշալի Կերթուտ Պե, որ տարեց իրաքցիներու կողմէ մինչեւ այսօր կը յիշուի երկրի հնութիւնները պահպանելուն եւ Իրաքի թանգարանը հիմնադրելուն համար, 1909-ին ներկայացուցած է Հայէպի աւելի խոհուն ու երկինքանագ դիմանկարը: Տիկին Պե հիացած է քաղաքի կենսունակութեամբ, յատկանշական նկարագրով եւ ճարտարապետութեան «մոլայ շքեղութեամբ»: Տիկին Կերթուտ Պե գրած է. «Հայէպ քաղաք մըն է, որ արագօրէն կը պաշտպանէ առեւտրականներու հետաւոր վայրերէ շահած հարստութիւնը»: Դամասկոս եւ Պոլիս կրնային աւելի կայսերական ըլլալ, Պաղատա՝ ինքնուրուի քաղաքը, աւելի ազնւորական, իսլամական, Գահիլէն՝ աւելի հրաշալի, բայց Հայէպ միշտ եղած է աւելի խորհուրդ, գաղափար, բան քաղաք: Ան եղած է քաղաքային օրինակը համակեցութեան, վայր մը, ուր մեծ չափով (եւ հոս հոն ցանցատ, արեւնայի բացառութիւններով), հանդուրժողականութեան ոգին իշխած է ստոր ընտանիքներու վրայ: 11 Նոյեմբեր 1918-ին (Ա. Աշխարհամարտի աւարտի զինադադարին առաջին օրը) Ճայսայ իշխան, ապագային Իրաքի թագաւորը, Հայէպ այցելելէ քանի մը օր ետք հրապարակաւ իր յանձնարարութիւնը յայտնած է խորապէս արմատաւորուած համակեցութեան այս աւանդութեան:

Ժամանակին հոմանիշ խաղաղութեան եւ ճոխութեան, խորամանկութեան եւ խոհականութեան, այսօր Հայէպ Սուրիոյ Ստայիկիստն է, քաղաք մը, որ երկփեղկուած է ապստամբներու եւ վարչակարգին միջեւ: Ասիկա քաղաքային խորտակում մըն է, սրտին մէջ անոր, որ ՄԱԿ կ'անունէ «մեր սերունդի մարդասիրական վատագոյն տագնապը»: Դարեր շարունակ Միջին Արեւելքի հարստութեանց համար էական նշանակութիւն ունեցած քաղաքը այսօր կորսնցածն է պատճառով կը թուի, թէ պիտի խորտակուի: Քաղաք մը, որ միայն վերջերս կը պարծնար իր 2 միլիոն բնակչութեամբ, պարպուած եւ վերածուած է 400 հազար հաշուող պաշարուած, քարուքանդ տարածքի մը: Կենսական անհրաժեշտութեան ապրանքներու սակերը կը բարձրանան ուժեղացնելով պատճառով: Մեր դամբարանը անմատչելի կը դառնայ: Հայէպ քաղաքի հնձուած արտերը փոշիացած են, ինչպէս նաեւ պատմական կոթողները, որոնց շարքին՝ Խուսուվյա մզկիթը, որ գործն է երեք սուլթաններու գահակալութեան ընթացքին օսմանն գլխավոր ճարտարպետ Միմար Սիւսանի: Քարուքանդ վիճակի մէջ են նաեւ հոյակապ փակ շուկաները, որոնք բարախուն առեւտրական սիրան էին Ինթիլ-Սիւսի համաշխարհային ժառանգութեան վայրին: Հզօր միջնաբերդը, որ դիմացած է հոմանիցիներու, յոյներու, պարսիկներու, եգիպտացիներու, թաթարներու եւ արաբներու արշաւանքներուն, Լենկ Թիմուրի բնաջնջող այցելութեան (սուրբացի պատմաբանի մը կողմէ նկարագրուած իբրեւ «ուխտազնացութիւն ոչնչացման»), արդէն ողբերգականօրէն սպիացած է եւ այժմ կ'իշխէ ուժեղացնուած տուններու, փուլած բնակիչ շէնքերու եւ փլուզուող կենքերի վրայ:

«Արարները արարներ էին՝ նախքան Մովսէս, Յիսուս եւ Մուհամմադ: Իոյր կրօնները երկրի վրայ եղբայրութիւն կը պատուիրեն: Ով որ տարակարծութիւն կը սերմանէ իսլամին, քրիստոնեային եւ հրեային միջեւ, արար էլ»:

Երբեմնի հռչակաւոր քաղաքը ինչպէ՞ս այս վիճակին հասաւ: Ասիկա հարցում մըն է, որուն Ֆիլիպ Մանսելի սքանչելի նոր պատմութիւնը կը փորձէ անուղղակի պատասխանել նշելով պատճառները Հայէպի նախկին վեհութեան եւ ներկայի տանջանքին:

«Նման տեսակէտները կը պատկանին Միջին Արեւելքի պատմութեան մէջ այլ դարաշրջանի: Առեւտուրը եւ համակեցութիւնը առանձինն որքան ալ կենսական ըլլան քաղաքներու աւելին համար, բաւարար չեն գանձեց պաշտպանելու վերջնական կործանումէ», համոզիչ կերպով կը պնդէ Մանսել գիրքի վերջին գլուխին «Քաղաքի մը մահը»-ին մէջ: «Ատոնք կախեալ են պետական աջակցութեանն եւ թշնամիներուն դէմ ուժի օգտագործումէն կամ սպառնալիքէն», կ'աւելցնէ ան:

Ան կը գրէ հետաքրքրական եւ իւրայատուկ ոճով մը: Գիրքին առաջին քառորդը բաղկացած է գեղեցիկ նկարագրուած դրուագներէ, 1516 թուականի օսմանն հրաւրումէն մինչեւ այսօր: Մնացեալ մասը նըւերուած է դարերու ընթացքին անվերջ ճամբորդութիւններու մասնակցեցնելու հանկի պատմութիւններուն: Հոս են բոյսերը ուսումնասիրող Լէոնարդ Ռո-վոֆֆը, 16-րդ դարուն, ինչպէս նաեւ Ժան-Պափիստ Թաւեռնիէն, արհամարհող ֆրանսացի գրագիր վաճառականը, որ յայտնաբերած է 112 քարաթնոց «Կապուտակ Թաւեռնիէ» աղամանքը եւ առիւթ 17-րդ դարուն վաճառած է Լուի 14-րդ թագաւորին: Դարերու ընթացքին Հայէպ այցելած են հռչակաւոր հնախոյններ, վաճառականներ, հնագէտներ եւ լրտեսներ: Գիրքին մէջ նաեւ կը հանդիպինք վատապաւոր ճանապարհորդ, վաւերական լրագրող եւ ապագային Բրիտանիոյ խորհրդարանի անդամ Միլք Պաքիկհասի, որ 1816 թուականի Հայէպ իր այցելութեան ըն-

Հայէպ անցնելու հետեւալ պատգամը ունէր՝ «Տարբեր ցեղեր եւ կրօններ կրնան գոյակցել նոյն քաղաքին մէջ»: Գրեթէ դիշուրուան մը մէջ հանդուրժողականութեանն է աջակցութիւն անցում կատարելով Հայէպ փոխած է իր պատգամը: Ասիկա ցոյց էր տալ, որ 21-րդ դարը կրնայ նախորդ դարերուն չափ կործանարար ըլլալ: Մանսել խորապէս քաղաքակիրթ եւ քաղաքակիրթ պատմաբան է, որ բազմաթիւ տարիներ անցուցած է Միջին Արեւելքի մէջ: Գեղակաւ եւ եղբերգական «Հայէպ» գիրքը թանկարժէք յուշարձան մըն է երբեմնի շքեղ քաղաքին, որ արդէն ներթափուրած է անարգ կործանումի եւ թշուառութեան:

Գարիլի է միայն յուսալ, որ, ինչպէս իր դրացի Պաղատա, որ դարձած է ճկունութեան խորհրդանշան, Հայէպ կը բարձրանայ մոխիրէն: Սակայն Միջին Արեւելքի եւ իսլամական աշխարհի (Սուրիային եւ Իրաքին դէպի եմէն եւ Լիպիա) սպառնացող կործանարար ցնցումները այնպիսին են, որ նման հեռանկարներ իսկապէս տեղադրել թուի:

Դատարկուելով իրենց հրէական եւ քրիստոնէական համայնքներէն, գրկուելով իրենց կենքեր բարձրացման աշխարհաքաղաքացիութիւնէն, երբեմնի աննախապաշար Տար էլ Իսլամը ինքն իր իրալ կը կծկուի աւելի ու աւելի նշաւակ դառնալով համայնքայնութեան, հաւատարմողականութեան քանդիչ շարքերին:

## ՕԳՍԷՆ ԽԱԶԱՆԵԱՆ ԵՐԷԿ

● **Չար. Ա. Էջէն**  
 միջիններ մինչեւ շարժապարհը պիտի հետեւին կացութեան եւ եթէ ներկայ դարձմանումներով կարելի չըլլայ հասնիլ բարեկեանութի մը՝ ապա անհրաժեշտ պիտի դառնայ վերահաստեղծումը:

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՕՐ

● **Չար. Ա. Էջէն**  
 Լէններ: Եղիշ Չարեանի տուն-թանգարանին մէջ գրական խմբակներու աշակերտներու կողմէ ներկայացուցան դասական եւ արդի բանաստեղծներու ստեղծագործութիւնները:

Մինչ այդ, Օքսէն ինչպէս որ վարժ հիւանդանոց պիտի երթայ հերթական քննութեան եւ իր վէրքերու խնամքին համար:

Հիւսիսային պողոտայի առընթեր, օրուան ծրագրի գանազան հանգրուանները կենքերի կողմէ ներկայացուցան արդի բանաստեղծներու ստեղծագործութիւններուն, թանգարաններուն, մշակութիւնը տուններուն, գրականութեանն, ակունքներուն եւ գիշերօթիկ դպրոցներուն մէջ: